Արձանագրություն N 3

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով իրականացվող
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 01 նոյեմբերի 2018թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Ս. Սարգսյան, Վ. Քեռյան, Ա. Պեպանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Պ. Մարգարյան

1. էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի որակավորման փաստաթղթերի գնահատում

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետը տեղի է ունեցել ս. թ. հոկտեմբերի 23-ին ժամը 10:00-ին: 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղ է զբաղեցրել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն: Վերջինիս ուղարկվել է ծանուցում՝ հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերի ներկայացման համար: Սակայն գնման ընթացակարգի հերթական նիստը կասեցվել է, քանի որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 3-ը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին: Մասնավորապես առաջարկվող ապրանքի աղյուսակում ներառվել է գնառաջարկի սյունակ, սակայն գնառաջարկն արդեն ներկայացվել էր, և աճուրդի արդյունքում վերջնական գնառաջարկը հաստատվել է eauction.am համակարգի միջոցով: Մասնակցին առաջարկվել է ուղղել պահանջվող փաստաթուղթը և մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև ս.թ. նոյեմբերի 3-ը, ժամը՝ 10:00) ներկայացնել ճշտված փաստաթուղթը: Նշված ժամկետում 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցը չի ներկայացրել ճշտված փաստաթուղթը: Ուստի՝ Հանձնաժողովը որոշեց մասնակցի որակավորումը գնահատել անբավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետով՝ հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտներ հարցում ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 3-րդ և 5-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում՝ «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ի հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրվեց 08.11.2018թ. ժամը 10:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
նախագահ՝ _____ Վ. Թորոսյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Ս. Սարգսյան

_____ Վ. Քեռյան

_____ Ա. Պեպանյան

Քարտուղար՝ _____ Պ. Մարգարյան